

**ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԻՊԸ  
ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆՈՒՄ**

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կրկնությունը լեզուներում գործող բառակազմության միջոցներից է: Հայերենի պատմության հնագույն շրջանից ի վեր կրկնության ճանապարհով ստեղծվել են զգալի քանակությամբ բառեր, որոնք լեզվի բառային կազմի հետ փոխանցվել են հին հայերենին: Մյուս կողմից նախագրային փոխառություններին զուգահեռ հինգերորդ դարում ի հայտ են գալիս կրկնության նոր կաղապարներ և նոր տիպեր, նախկին կաղապարների մի մասը դառնում է քիչ գործուն, մյուսը՝ ոչ գործուն և անարդյունավետ<sup>1</sup>: Հին հայերենին փոխանցված և հին հայերենում կազմավորված կրկնավոր բարդությունները լայն գործածություն են ստացել հինգերորդ դարի թարգմանական գրականության մեջ, մասնավորապես Աստվածաշնչի թարգմանական գրքերում և ժամանակի մատենագրական հուշարձաններում<sup>2</sup>:

Նկատի ունենալով, որ Աստվածաշունչ մատյանը հայերեն առաջին (թարգմանական) աշխատանքն է՝ մեզ հետաքրքրում է, թե հնագույն շրջանից ավանդված կրկնավոր բարդություններն ինչպիսի գործածություն ունեն և բառակազմական ինչպիսի տիպերով են հանդիպում մատյանի հայերեն գրքերում<sup>3</sup>:

Մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Աստվածաշունչ մատյանի գրքերում գործածված կրկնավորները հանդես են գալիս բառակազմական որոշակի տիպերով: Բառակազմական տիպը որոշվում է ըստ այն սկզբունքի, թե ի՞նչ գործոններ են ընկած կրկնավոր բարդության ձևավորման հիմքում: Ըստ այդմ, կարելի է առանձնացնել արմատակրկնության որոշակի բառակազմական տիպեր, ինչպիսիք են՝ *արմատական տիպ, նախդրավոր և շաղկապավոր տիպ, հնչյունաանկումով տիպ, ածականով տիպ, ձայնդարձով և հերթագայությամբ տիպ*:

Աստվածաշնչի բառային կազմում արմատակրկնության բառակազմական կաղապարների վիճակագրությունը ցույց է տալիս, որ գոր-

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 364:

<sup>2</sup> Ըստ Հր. Աճառյանի՝ հայերենի կրկնավորների թիվը հասնում է շուրջ 500-ի (տե՛ս **Հր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 83-93):

<sup>3</sup> Քննության բնագիր ենք ընտրել 1997-ին Հայաստանի աստվածաշնչային ընկերության հրատարակած բնագիրը «Աստուածաշունչ մատենան հին և նոր կտակարանաց»:

ծառական հաճախականությամբ կենսունակ է *արմատական տիպը*:

Այժմ դիտարկենք մեր ընտրանքում եղած *արմատական տիպի կրկնավորները* և ցույց տանք դրանց ձևակազմական յուրահակություններն ու իրացումներն Աստվածաշնչի հայերեն գրքերում<sup>4</sup>:

*Արմատական տիպի կրկնավորները* կազմված են արմատի պարզ կրկնությամբ, և, ըստ Հր. Աճառյանի, դրանք նման են նախալեզվի հնագույն վիճակին, որ սկզբում իր բոլոր կրկնավորները արմատի ամբողջական կրկնությամբ էր կազմում. կրկնության այս ձևը ժառանգություն է մնացել նախալեզվից<sup>5</sup>: Այս կարգի բառերի արմատները կրկնվելով պահպանում են իրենց բառապատկերը՝ բովանդակային պլանում արտահայտելով նաև իմաստի սաստկականություն:

Արմատական կրկնավորները, ըստ բաղադրիչների միավորման սկզբունքի, ենթաբաժանվում են հոդակապով և անհոդակապ տեսակների:

Ա) *Հոդակապով կրկնավորները* ցուցաբերում են բաղադրիչների կայունություն, որ պայմանավորված է նրանց (բաղադրիչների) առանձին բառական շեշտով. յուրաքանչյուր բաղադրիչ կրկնվելով կրում է առանձին բառական շեշտ<sup>6</sup>:

Աստվածաշնչի հայերեն գրքերում հանդիպում են արմատական կրկնավորների հոդակապով հետևյալ բարդությունները. *գէշագէշ, գոյնագոյն, գունդագունդ, դասադաս, դարձադարձ, զանազան, մեծամեծ, շեղջաշեղջ, չարաչար, կորակոր*:

Գ. Ջահուկյանն արմատական կրկնավորների հոդակապավոր տիպը համարում է հետհնդեվրոպական շրջանի յուրահատկություն, որ կապված է –ա- հոդակապի գործածության հետ<sup>7</sup>:

Հոդակապով կրկնավորները հիմնականում հատկանշային խոսքի մասեր են (աձական կամ մակբայ) և ցույց են տալիս հատկանիշի սաստկություն, առավելություն կամ բազմապատկություն: Աստվածաշնչում վերոբերյալ բառերն այդ դերով էլ հանդես են գալիս:

*Գէշագէշ* կրկնավորի արմատական բաղադրիչը՝ *գէշ*, որ հանգում է իրանական աղբյուրին՝ *qēša* «փտել, նեխել» բառին<sup>8</sup>, «դի, դիակ. պատառ, մարմնի պատառ» իմաստներով գործածական է գրաբարում, այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Ի մտոյ նոցա մի՛ ուտիցեք, եւ ի *գէշ* նոցա մի՛ մերձենայցեք, քանզի պիղծ իցէ ձեզ այն (Ղեւտ., ԺԱ. 8): *Գէշ* արմատի կրկնությամբ է կազմվել *գէշագէշ* բար-

<sup>4</sup> Ա. Բագրատունին, իր աշխատանքի «Յադագս բարդութեան բառից» գլխում քննելով արմատակրկնությամբ առաջացած բարդությունների տեսակները, նկատում է. «Այսպէս երբեմն մի և նոյն անուն բարդեալ գտանի ինքն ինքեամբ. Պէսպէս, վաղվաղ, վազվազ, բաղբաղայք, բեկբեկ, ծործոր, լուռլուռ» (Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 660):

<sup>5</sup> Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 96:

<sup>6</sup> Տե՛ս Է. Կուսմանյան, *Древнеармянский язык*, М., 1971, էջ 168-169:

<sup>7</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 364:

<sup>8</sup> Բառի ստուգաբանությունը կատարել է Գր. Ղափանցյանը (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 550, այսուհետև՝ ՀԱԲ):

դությունը «պատառ-պատառ, ծվեն-ծվեն, բզկտելով» իմաստներով, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Մանր մանր կոտորեալ, զայս թռչնոց *գեշագեշ* ջամբեցից (Բ.Մակ., ԺԵ. 33):

*Գոյնագոյն* բարդության արմատական բաղադրիչը՝ *գոյն*, հանգում է իրանական ցոռ «գույն, տեսակ» արմատին (ՀԱԲ, 1, 578): *Գոյն* արմատական բառը «գույն, ներկ. դալկություն» իմաստներով կենսունակ գործածություն ունի գրաբարում. այն գործածված է նաև Աստվածաշնչում, հմմտ. Թիկնամէջք նորա ի *գոյն* ոսկոյ (Մադ., ԿԷ. 14): Արմատակրկնությանը կազմված *գոյնագոյն* բարդությունը «գույնզգույն, բազմերանգ» նշանակությամբ գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ ի *գոյնագոյն* ծաղիկս պսակեալք ուրախութեամբ եւ ցնծութեամբ ... գոհանային զԱստուծոյ հարցն նոցա (Գ.Մակ., Է. 11):

*Գունդագունդ* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *գունդ*, «բազմություն, բանակ, զորագունդ» իմաստով հանգում է իրանական աղբյուրին՝ որպէս փոխառություն, հմմտ. պիլ. ցոռ «բանակ, զունդ», պրս. ցոռ կամ ցոռա «ժողով, զումար, խումբ, բազմություն» (ՀԱԲ, 1, 595): *Գունդ* բաղադրիչը արմատական նշանակությամբ գրաբարում կենսունակ գործածություն ունի. այդ իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Սոքա են *գունդք* դետացոց (Թիւք, Գ. 21):

Արմատակրկնությամբ կազմված այս բարդությունն ունի «բազմամարդ, զունդ գնդի հետևից» իմաստներ, հմմտ. Ահաւասիկ ես ածից ի վերայ քո ... *գունդագունդ* հեծելովք ազգաց բազմաց յոյժ (Եզեկ., ԻԶ. 7): Աստվածաշնչում գործածված է «հորդահոս, առատորեն» իմաստով, հմմտ. Մինչեւ արիւնն *գունդագունդ* արտաքս հոսէր, եւ վերքն չարաչար պատառեալ էին (Բ. Մակ., ԺԴ. 45)<sup>9</sup>:

*Մեծամեծ* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *մեծ*, ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական \*meg a- meg (h) «մեծ» արմատին (ՀԱԲ, 3, 295)<sup>10</sup>: Գրաբարում այն ունի «քանակով՝ թվով՝ տարածությամբ՝ ժամանակով շատ» իմաստներ և կենսունակ գործածությամբ հանդես է գալիս Աստվածաշնչում, հմմտ. Եւ ասէ Կային ցՏէր Աստուած. *Մեծ* է պատիժ իմ, քան զթողուլդ զիս (Մնն., Դ. 13): Այն ունի «շատ մեծ, մեծ-մեծ» իմաստներ, հմմտ. Եւ արար Աստուած զերկուս լուսնաւորսն *զմեծամեծս* (Մնն., Ա. 16): Աստվածաշնչում գործածված է նաև «երևելի՝ պատվական այրեր» իմաստով, հմմտ. Եւ ժողովեցան ի փոքուէ մինչեւ *ցմեծամեծս*, քանզի զարմացեալ էին նոքա յոյժ (Յուդիթ, ԺԳ. 15): *Մեծամեծ* սերող հիմքով Աստվածաշնչում հանդիպում է *մեծամեծար* բաղադրությունը «շատ մեծարելի՝ պատվելի՝ պատվավոր, արժանապատիվ» իմաստներով:

*Դասադաս* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը հանգում է իրանական աղբյուրին՝ խոտա-սակ *dasa* «բաժին» կամ «դաս,

<sup>9</sup> Բառի՝ այս իմաստով գործածությունը հունաբանություն է՝ *աղբերաբար*:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 521, այսուհետև՝ ՋՄԲ:

կարգ» իմաստներով (ՋՄԲ, 185): Գրաբարում *դաս* արմատը նշանակում է «խումբ (մարդկանց, կենդանիների, առարկաների, զինվորների, հրեշտակների նն.), կարգ»: Աստվածաշնչում գործածված է «մարդկանց՝ կենդանիների խումբ» իմաստով, հմմտ. Եւ էին ընդ նման, որ բառնային գտապանակն զեւթն դաս պարուց (Բ. Թագ., Զ. 13): Այն ունի «դաս-դաս, խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստ, որ եզակի կիրառությամբ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Դարձեալ յիւրանքանչիւր ապարանիցն *դասադաս* մտանէին ի համաշխարհի ինդրուածս (Բ. Մակ., Գ. 18):

*Դարձադարձ* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *դարձ*, հանգում է բնիկ հնդեվրոպական \*dhrǵʰh-՝ \*dherǵʰh-/\*dhregʰh- (սահող ձայնդարձով) «պտտել, դարձնել, ոլորել» արմատին (ՋՄԲ, 189): *Դարձ* արմատը ինքնուրույն բառական արժեքով գործածվում է գրաբարում՝ «վերադարձ, հետ դառնալը՝ ամեն առումով» իմաստներով: Հմմտ. Լուռ լեր, առ քեզ լիցի *դարձ* նորա, եւ դու տիրեսցես նմա (Ծնն., Դ. 7): *Դարձադարձ* բարդությունն արտահայտում է բազմապատիկության իմաստ՝ «կրկին՝ վերստին հետ դառնալը, վերադարձ»: Աստվածաշնչում ունի եզակի կիրառություն, հմմտ. Մոյնպէս մատաղամարքն մանկամբքն հանդերձ ... ընդ անդաստանս առանց *դարձադարձի* աւագամեծար տաճար անդր պնդեալ ժողովէին (Գ. Մակ., Ա. 11):

*Չանազան* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *զան*, համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ \*zan, հմմտ. հին պրս. zana «տեսակ, կերպ»: Գրաբարում այն անկախ բառական միավոր չէ և հանդես է գալիս իբրև բառակազմական բաղադրիչ (բազմազան, սրբազան): Արմատակրկնությամբ կազմված *զանազան* բարդությունն արտահայտում է հոգնակիության իմաստ՝ «տեսակ-տեսակ, պէս-պէս. բազմապատիկ»: Աստվածաշնչում հանդիպում է կրկնավոր սերող հիմքով կազմված *զանազանութիւն* բաղադրությունը՝ եզակի գործածությամբ՝ «տարբերութիւն, պէսպիսություն, բազմապատիկություն» իմաստներով, հմմտ. Պարապութիւն նորա նորոգել *զանազանութիւն* (Սիրաք, ԼԸ. 28):

*Շեղաշեղ* կրկնավորի արմատական բաղադրիչի ծագումն անհայտ է, հավանական է համարվում նրա կապը խեթ. šeli- արմատի հետ՝ որպէս փոխառություն՝ «հացահատիկի կույտ» նշանակությամբ (ՋՄԲ, 585): *Շեղ* արմատն անկախ գործածություն ունի գրաբարում. այն նշանակում է «կույտ, դեզ (ցորենի, արմատիքների)»: Այդ իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ երթիցես ի գերեզման իբրեւ զցորեան հասեալ... իբրեւ *զշեղ* կալոյ ի ժամանակի ամփոփեալ (Յովբ, Ե. 26): *Շեղաշեղ* բարդությունը «շեղ-շեղ, կուտակ-կուտակ, խիտ առ խիտ» իմաստով գործածական է գրաբարում. հմմտ. Ջերդմունս եւ զդաշինս հարցն յիշատակեալ՝ *շեղաշեղ* դիականցն անկելոց առ միմեանս՝ կացեալ ի մէջ դադարեցոյց զբարկութիւն (Իմաս., ԺԸ. 23):

*Չարաչար* կրկնավոր բարդության *չար* արմատական բաղադրիչի ծագումը հավանական է համարվում (*n*)*չ-ար* ձևից (> յար, յարել, առնել) (ՋՄԲ, 612)<sup>11</sup>: Այդ բաղադրիչը «չար, վատթար, գեշ» իմաստով, գործածական է գրաբարում: Հմմտ. Ածցել Տէր ի վերայ ձեր զամենայն բանս *չարս* (Յեսու, ԻԳ. 15): Փոխաբերական իմաստով նշանակում է «վնասակար, դժնդակ, անախորժ», հմմտ. Ասասցուք, եթէ զազան *չար* եկեր զնա (Ծնն., ԼԷ. 20): Ունի նաև առարկայական նշանակություն՝ «վնաս, չարիք, չարություն, թշվառություն» իմաստներով: Հմմտ. Յաւելին որդիքն Իսրայելի առնել *չար* առաջի Տեառն (Դատ., ԺԳ. 1): *Չարաչար* բարդությունը բազմիմաստ բառ է. «չար, դժնդակ, անտանելի, սաստիկ. սաստկապէս» իմաստներով կենսունակ գործածություն ունի Աստվածաշնչում, հմմտ. Հրաման տայր ածել, ժողովել, կուտել զնոսա եւ *չարաչար* մահու սպանանել զկեանս նոցա յերկրէ (Գ. Մակ., Գ. 1): Ժողովուրդն տրտնջէր *չարաչար* առաջի Տեառն (Թիւք, ԺԱ. 1):

*Կորակոր* բարդության արմատական բաղադրիչը ստուգաբանորեն հանգում է բնիկ հնդեվրոպական \*gor- \*ger- «պտտել, ոլորել» արմատին (ՋՄԲ, 422): *Կոր* բաղադրիչն անկախ գործածությամբ կենսունակ միավոր է գրաբարում՝ «ծուռ, ծոված» իմաստով: Աստվածաշնչում գործածված է «կամարաձև, թեքված, դեպի ցած խոնարհված» իմաստով, հմմտ. Մի՛ պարծեսցի *կորն* իբրեւ զուղիղն (Գ. Թագ., Ի. 11): Կրկնավոր բարդությունն արտահայտում է «բոլորովին կորացած՝ կոացած, փխբ. ամոթահար, զլխահակ» իմաստներ, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Երթայի գաղտագողի *կորակոր* առաջի նոցա (Եզեկ., ԺԲ. 7): Անարժան *կորակոր* յանձանց ի բաց մերժէին (Բ. Մակ., Թ. 1):

Բ) *Անհողակապ կրկնավորներն* արմատական բաղադրիչների համադրական կազմություններ են, որոնք հանդես են գալիս ինչպես առանձին բառական միավորներ, այնպես էլ իբրև բաղադրության սերող հիմքեր: Համեմատաբար գերակշռում են այս կազմությամբ բայական միավորները: Ինչպես կրկնավորների հողակապով տեսակը, այնպես էլ անհողակապ կրկնավորները ցույց են տալիս արմատական իմաստի սաստկություն, առավելություն, բազմապատիկություն:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հանդիպում են այդ կառուցատիպի հետևյալ բառերը. *աղիսաղիսել, աղտաղտին, այլայլել, արծարծել, խողխողել, խորխորատ, ծործոր, մեղմեղ, ողողել, որոր, չարչարանք, ջախջախ, սորսորել, վաղվաղ, փայփայել, փողփողել, բարբարել*:

Այս բառերի արմատական բաղադրիչները միանշանակ մեկնաբանություն չունեն: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի. բառեր, որոնց արմատական բաղադրիչները՝ իբրև անկախ բառական միավորներ, զիտակցվում են, և բառեր, որոնց արմատական բաղադրիչների իմաստները մթազնել են և չեն զիտակցվում:

<sup>11</sup> Հ. Աճառյանը և Հ. Հյուբշմանը չեն ընդունում այս մեկնությունը (տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, 3, 625):

*ա) Առաջին խմբին* են պատկանում այն կրկնավորները, որոնց արմատական բաղադրիչները գրաբարում անկախ գործածություն են ունեցել և իրենց արմատական իմաստով գիտակցվում են: Այդպիսի կրկնավորները դարձել են նաև բառակազմական սերող հիմքեր այլ միավորների համար, ինչպես՝ *այլայլել, խորխորատ, ծործոր, կողկողել, ողողել, չարչարանք, վաղվաղ*:

Աստվածաշնչի թարգմանական գրքերում կրկնավորները համապատասխան շարահյուսական միջավայրում արտահայտում են արմատական իմաստի կրկնություն կամ սաստկություն:

*Այլայլել* կրկնավորի *այլ* հիմնական բաղադրիչը «ուրիշ, մեկ ուրիշ» իմաստով հանգում է բնիկ հնդեվրոպական \**alio*, \**alyo* արմատին (ՀԱԲ, 1, 168; ՋՄԲ, 48): *Այլ* բաղադրիչն այդ իմաստով Աստվածաշնչում գործածված չէ: Նրանով կազմված կրկնավոր բարդությունն ունի «փոփոխվել, այլափոխվել, փոխակերպվել» իմաստներ: Հմմտ. *Այլայլեացէ* գերեսս իւր յոգոց հանելով, այլ ո՛չ եւս տեսանել զքեզ կենդանի (Սիրաք, ԺԲ. 19):

*Խորխորատ* կրկնավոր բարդության արմատական *խոր* բաղադրիչը «խորունկ, խոր տեղ, փոս» իմաստներով հանգում է բնիկ հնդեվրոպական \**khoro-* \*(*s*)*kerd* «կտրել» արմատին (ՋՄԲ, 343): Այն առանձին գործածական է գրաբարում. այդ իմաստներով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Գուր *խոր* է բերան անօրինի (Առակ., ԻԲ. 14): Ունի նաև փոխաբերական նշանակություններ՝ 1. «դժվարիմաց, թաքուն, գաղտնի», հմմտ. Յոյժ *խոր* են խորհուրդք քո (Սաղ., ՂԱ. 6): 2. «սաստիկ», հմմտ. Ջի մի՛ ի *խոր* մոռացումն անկանիցին (Իմաս., ԺՁ. 11): Նրանով կազմված կրկնավոր բարդությունը բազմիմաստ բառ է՝ «խոր փոս, վիհ. գերեզման, դժոխք» նշանակություններով: Աստվածաշնչում խորխորատ բառը հանդիպում է այդ իմաստներով: Հմմտ. 1. Թաքեաւ ժողովուրդն ի *խորխորատս* (Ա. Թագ., ԺԳ. 6): 2. Մինչեւ փորեացի *խորխորատ* մեղաւորի (Սաղ., ՂԳ. 13): 3. Ի վախճանի *խորխորատ* դժոխոց (Սիրաք, ԻԱ. 11):

*Ծործոր* կրկնավոր բարդության արմատական *ծոր* բաղադրիչը համարվում է կա՛մ կովկասյան փոխառություն, կա՛մ բխեցվում է մի երրորդ աղբյուրից (ՋՄԲ, 367): Այն «ձոր, ծերպ, խորշ, խոռոչ» իմաստներով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Առաքեաց զնա ի *ծործորոյն* Քեբրոնի (Օնն., ԼԷ. 14): Բնակեալ էին ի *ծործորսն* (Դատ., Է. 12):

*Կողկողել* կրկնավոր բարդության ծագումը հավանական է համարվում հնդեվրոպական \**gal* «կանչել, ճչալ» արմատին մոտ (ձայն-դարձով) \**gol* տիպի արմատից (ՋՄԲ, 416): Բարդությունը «բարձրաձայն լալ, ողբալ, մղկտալ, մորմոքվել» իմաստներով գործածական է գրաբարում. այդ նշանակություններով հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Գայթակղեացին չարք առաջի բարեաց, եւ ամպարիշտք *կողկողեացին* առ դրունս արդարոց (Առակ., ԺԴ. 19): Աստվածաշնչում կրկնավոր սերող հիմքով գործածված է *կողկողացին* բաղադրությունը՝ «լալագին, ցավագին, տրտմագին» իմաստներով:

*Ողողել* կրկնավորի արմատական բաղադրիչն է առանձին անգործածական *ող* ձևությամբ, որ ծագում է դարձյալ առանձին անգործածական *հեղ* արմատից, որից՝ *հեղ-ուլ* («թափել, լցնել»): *Հեղ* արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական \*pel- արմատին, որի ձայնդարձով տարբերակներն են pol-, pl-, որոնք հայերենում տալիս են pel->հեղ, pol->ող (ՀԱԲ, 3, 76): *Ող* արմատի կրկնությամբ կազմված է *ողող* բարդությունը՝ «հեղեղ» իմաստով, սրանից էլ՝ *ողողել*՝ «հեղեղել, հորդել» նշանակությամբ: Աստվածաշնչում *ողողել* գործածված է «հեղեղել, ավերից դուրս գալով՝ ծածկել» իմաստով, հմմտ. Եւ եթէ անցանիցես ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ, եւ գետք զքեզ մի՛ ողողեացեն (Եսայ., ԽԳ. 2):

*Չարչարանք* կրկնավոր բաղադրության սերող հիմքն է *չարչար*<sup>12</sup>: Այդ սերող հիմքով է կազմված *չարչարանք* անհոդակապ բառը՝ «աստիկ նեղություն՝ վիշտ, տանջանք» իմաստով, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Արդ, առաքեա՛ դու արս հաւատարիմս, որ եկեսցեն եւ տեսցեն *զչարչարանս* ազգին (Ա. Մակ., Է. 7):

*Վաղվաղ* կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ *վաղ*, «շուտ, կանուխ, հաջորդ օրը, առավոտյան վաղ» իմաստներով, փոխառություն է մի աղբյուրից (ուրարտերենից) (ՋՄԲ, 702): Այդ իմաստներով կենսունակ գործածություն ունի գրաբարում, հմմտ. *Վաղ* հասանելին, արագ արագ զաւարն ժողովէին եւ առնուին զամուրս ամենայն երկրին Եգիպտացոց (Ա. Մակ., Ա. 20): Արմատակրկնությամբ կազմվել է վաղվաղ բարդությունը, որ ունի «շատ շուտ, շուտափույթ, արագապես» իմաստներ, հմմտ. *Վաղվաղ* եկեսցէ առ մեզ ողորմութիւն քո, Տէր (Մաղ., ՀԸ. 8): Այդ բարդությունից է կազմվել Աստվածաշնչում գործածված *վաղվաղակի* բաղադրությունը՝ նախատիպի «անմիջապես, իսկույն» հավելական իմաստներով:

Անհոդակապ կրկնավոր բարդությունների մեջ Աստվածաշնչում հանդիպում են որոշակի վերլուծական կազմություններ, ինչպես *արագ արագ*<sup>13</sup>, *մանր մանր*, *դաս դաս*: Դիտարկենք այդ բառերը բնագրային կիրառություններում:

*Արագ արագ* անհոդակապ կրկնավոր բարդությունն ունի վերլուծական կառուցատիպ: Արմատական բաղադրիչը՝ *արագ*, ստուգաբանորեն հանգում է պիլ. \*rag արմատին՝ ա- կամ ե- նախահավելված աճականով (ՀԱԲ, 1, 291): Գրաբարում այն ունի «արագընթաց, կարճ ժամանակում, շուտ, շուտափույթ» իմաստներ, որ կենսունակ գործածություն ունի Աստվածաշնչում, հմմտ. Բարեկամքն ... իբրեւ տեսին, թէ այնպէս *արագ*

<sup>12</sup> *Չար* արմատական բաղադրիչի մասին տե՛ս *չարչար* բառի բացատրության հատվածում:

<sup>13</sup> Նոր հայկազյան բառարանը (ՆՀԲ) և Աստվածաշնչի համաբարբառը ներկայացնում են միայն *արագ արագ* բարդությունը՝ իբրև առանձին բառահոդված («Համաբարբառ հին և նոր կտակարանաց», աշխատասիրություն Թադևոս վարդապետի Աստուածատուրեան Արապկերցոյ, Երուսաղեմ, 1895):

հասաներ ի վերայ նորա դատաստանն, գահի հարկանէին (Գ. Մակ., Բ. 11): Նախատիպից կազմվել է *արագ արագ* կրկնավոր բարդությունը՝ «անհապաղ, անմիջապես, իսկույն» իմաստներով, հմմտ. *Արագ արագ* կապտեսջիր եւ վաղվաղակի աւար հարկանիջիր (Եսայ., Ը. 3):

*Մանր մանր*<sup>14</sup> կրկնավոր բարդության արմատական բաղադրիչը՝ մանր, հանգում է բնիկ հնդեվրոպական \*manu-r (\*men) «փոքր, փոքրացնել» արմատին (ՋՄԲ, 509): Գրաբարում առանձին գործածական բառ է՝ «մանր, փոքրիկ, ոչ մեծ» իմաստներով, որ հանդիպում է Աստվածաշնչում, հմմտ. Եւ զմեղսն ձեր ... գորթն ... կոտորեցի եւ խորտակեցի զնա յոյժ, մինչեւ եղեւ *մանր* իբրեւ զփոշի (Բ. Օրէնք, Թ. 20): Այս վերլուծական բարդությունը «մաս-մաս, կտոր առ կտոր» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. *Մանր մանր* կոտորեալ, զայս թոչնոց գեշագեշ ջամբեցից (Բ. Մակ., ԺԵ. 33):

*Դաս դաս* վերլուծական բարդությունը գրաբարում առավելապես հանդիպում է համադրական կազմությամբ՝ *դասսդաս*<sup>15</sup>: Աստվածաշնչում գործածված է վերլուծական ձևով՝ *դաս-դաս*՝ «խումբ-խումբ, խմբերով» (հոգնակիության) իմաստով, հմմտ. Եւ բազմեցան *դասք դասք*, ուր հարեր եւ ուր յիսուն (Մարկ., Զ. 40):

Այս կարգի անվանական հարադրությունները Աստվածաշնչում գործածված են -u ածանցական տարրով, որ բառին հաղորդում է մակբայական արժեք ու նշանակություն: Այդ բառերն են *գունդս գունդս, դասս դասս, շեղջս շեղջս*<sup>16</sup>: Դիտարկենք այդ բառերը Աստվածաշնչի հայերեն գրքերում:

*Գունդս գունդս* կրկնավոր բարդությունն Աստվածաշնչում գործածված է անվանաբայական հարադրության կազմում՝ *գունդս գունդս բաժանել*, որտեղ *գունդս գունդս* կրկնավորն ունի մակբայական նշանակություն՝ «տարբեր գնդերի՝ խմբերի (բաժանել)» իմաստով: Հմմտ. Իսկ Մակաբէոս զգարն ամենայն ի *գունդս գունդս* բաժաներ եւ ինքն իրով գնդան ի վերայ Տիմոթէոսի հասաներ (Բ. Մակ., ԺԲ. 20):

*Դասս դասս* վերլուծական բարդությունը ձևավորվել է *դաս դաս* բարդության սերող հիմքով՝ մակբայակերտ ածանցի միջոցով, այն նշանակում է «խումբ առ խումբ, կարգով»: Անկախ բառական արժեքով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. «Ասէ զաշակերտսն, բազմեցուցէր զդոսս *դասս դասս*՝ յիսուն յիսուն (Ղուկ., Թ. 14):

*Շեղջս շեղջս* կրկնավոր բարդությունը կազմվել է *շեղջ* արմատական բաղադրիչի կրկնությամբ՝ -u մակբայակերտ ածանցի միջոցով<sup>17</sup>: *Շեղջս շեղջս* վերլուծական բարդությունը «դաս առ դաս, խումբ առ

<sup>14</sup> ՆՀԲ-ն տալիս է *մանրամանր* ձևով (հ. 2, էջ 208):

<sup>15</sup> Տե՛ս հոդակապով բարդությունների բաժնում:

<sup>16</sup> Վերլուծական այս բարդությունները իբրև առանձին բառահոդվածներ, տրված չեն գրաբարի բառարաններում, մասնավորապես ՆՀԲ-ում և Աստվածաշնչի համաբարբառում:

<sup>17</sup> Տե՛ս հոդակապով բարդությունների բաժնում:



խումբ» իմաստով գործածված է Աստվածաշնչում, հմմտ. Եւ նորա ածին գտասանորդս գուարակացն եւ ոչխարաց, եւ բերեալ կուտեցին շեղջս շեղջս (Բ. Մնաց., ԼԱ. 6):

բ) *Երկրորդ խմբին* են պատկանում այն կրկնավորները, որոնց արմատական բաղադրիչները գրաբարում անկախ գործածություն չեն ունեցել, այլ հանդես են եկել կրկնությամբ, որպես մեկ ամբողջություն<sup>18</sup>. այլ կերպ ասած՝ իրենց արմատական իմաստով չեն գիտակցվել (և չեն գիտակցվում լեզվի համաժամանակյա կտրվածքում): Դրանք կա՛մ բնիկ հայերեն բառեր են, կա՛մ փոխառություններ, որոնք ժամանակի ընթացքում ապրել են իմաստի մթագնման գործընթաց և այժմ մեկնաբանվում են ստուգաբանական եղանակով: Կրկնավոր այս կազմությունների իմաստների արտահայտած սաստկությունը (բազմապատկությունը) տարժամանակյա իրողություն է, որ արտացոլված է հինհայերենյան բնագրերում, մասնավորապես Աստվածաշնչի թարգմանական գրքերում:

*Աղիսաղիսել* բառի *աղիս* արմատը հանգում է սեմական աղբյուրին. արաբ. *ahl* - «ընտանիք, ցեղ, մարդիկ» և *yalaq*. *hraqn*. *aylaq*. «փականք, կողպեք» նշանակություններով) (ՋՄԲ, 38): Հմմտ. Բնակեսցե *աղիս* մեր ի քաղաքս պարսպաւորս (Թիւք, ԼԲ. 17): Գրաբարում կրկնավոր բարդությունը գործածվում է «կուտակել, դիզել, իրար վրա լցնել, կապկպել» իմաստներով: Հմմտ. Չփիդսն *աղիսաղիսեալ* տանէր (Բ. Մակ., Ժ. 4):

*Աղտաղտին* բառի *աղտ* արմատը հանգում է բնիկ հնդեվրոպական *sald* արմատին՝ «աղ» նշանակությամբ (ՀԱԲ, 1, 136; ՋՄԲ, 40): Հմմտ. Ի ձորն աղի որ է ծով *աղտից* (Օնն., ԺԴ. 3): Կրկնավոր բարդությունը գործածվում է «շատ աղ պարունակող, աղահամ տվող, շատ աղի» նշանակություններով, հմմտ. Ոչ *աղտաղտին* տեղուջ ջուր քաղցր (Յակո., Գ. 12): Աստվածաշնչում *աղտաղտ* հիմքով հանդիպում է *աղտաղտուկ* բաղադրությունը՝ նույն նշանակությամբ:

*Արծարծել* բառի *արծ* ձևությամբ կապվում է *արծնել* բայի («տաք երկաթով փայտին գծագրել») արմատի հետ և հանգում է բնիկ հնդեվրոպական *arg* արմատին՝ «փայլուն, սպիտակ, լուսավոր» նշանակություններով, հմմտ. *Արծնելն* եւ նկարելն (Բ. Մակ., Բ. 30): Կրկնավոր բարդությունն ունի «բորբոքել, բոցավառել, փխր. հրահրել, գրգռել» իմաստներ, հմմտ. *Արծարծել* զշնորհսն Աստուծոյ (Բ. Տիմո., Ա. 6): Աստվածաշնչում *արծարծ* հիմքով հանդիպում է *արծարծանել* բաղադրությունը՝ նույն նշանակությամբ:

*Բարբարել* բառի արմատի ծագումն անհայտ է (ՀԱԲ, 1, 420): Կրկնավոր բարդությունը «ժամանակ չունենալ, չկարողանալ մի բան անել. վարանել, տատանվել» իմաստներով գործածվում է գրաբարում, հմմտ. Ջի եւ

<sup>18</sup> Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Եր., 1962, էջ 139:

դուք զմտաւ ւածէք հոգալ ինչ վասն իմ, բայց *արբարէիք* իմնէ (Փիլի., Դ. 11):

*Որոր* բառի *որ* արմատը բնիկ հայերէն բառ է և հանգում է հնիւ. *or* արմատին՝ «թռչուն» իմաստով: Առանձին անգործածական արմատ է: Կրկնավոր բարդությունը (*որոր* կամ *ուրուր* տարբերակով)՝ «ցին թռչունը» իմաստով, գործածական է գրաբարում, հմմտ. Ջայլեամն և բու և *որոր* (Ղեւտ., ԺԱ. 16):

*Ջախջախ* բառի մեռած *ջախ* արմատը կապվում է *ջախել* («խփել») բայի հետ և հանգում է իւեթ. *zah(h)* «խփել» և վրաց. *jah* («խփել») կամ *jax* («մրճահարել») արմատներին (ՀԱԲ, 4, 119: ՋՄԲ, 649): Կրկնավոր բարդությունը «խորտակված, կոտրատված, փշրված» իմաստներով գործածական է գրաբարում, հմմտ. Յուսացեալ ես ի ցուպն եղեգնեայ ի *ջախջախ* յեգիպտացին (Եսայ., ԼԶ. 6): Աստվածաշնչում հանդիպում են այս հիմքով կազմություններ՝ *ջախջախանք*, *ջախջախել*:

*Փայփայել* կրկնավոր բարդության հիմնական ձևույթը հանգում է անծանոթ *փայ* արմատին (ՋՄԲ, 758)<sup>19</sup>: Բարդության նշանակությունն է «հոգատարությամբ՝ սիրով՝ խնամքով պահել՝ մեծացնել», հմմտ. *Փայփայեցից* զնոսա որպէս *փայփայէ* հայր գորդի (Մաղա., Գ. 17):

Այսպիսով: Աստվածաշնչի հայերէն գրքերում հանդիպող բառակազմական տիպերի համատեքստում յուրահատուկ խումբ է կրկնության արմատական տիպը, որ բնութագրվում է հոդակապով և անհոդակապ ենթատեսակներով: Բառակազմական արմատական տիպի բաղադրիչները (արմատահիմքերը) բնիկ հայկական կամ հնդեվրոպական փոխառյալ արմատներ են, որոնք կենսունակ ձևույթներ են դարձել բառակազմական մակարդակում: Այդ կարգի կազմությունները լայն գործածություն ունեն Աստվածաշնչի հայերէն գրքերում, որոնց ուսումնասիրությունը բացահայտում է հին հայերէնի բառակազմական հնարավորությունները լեզվի համաժամանակյա մակարդակում: Մյուս կողմից՝ պատմական բառակազմության եղանակով հնարավոր է բացահայտել այդ կազմությունների մի մասի՝ նախագրային ժառանգության հարցը:

Աստվածաշնչի բառային կազմում կրկնության արմատական տիպի ուսումնասիրությունը կարող է հիմք հանդիսանալ բառակազմական տվյալ իրողության տարժամանակյա ուսումնասիրության համար: Ընդ որում, բառակազմական իմաստաբանության տարժամանակյա քննություն կարելի է կատարել ինչպես գրաբարի շրջանակներում (նրա ենթափուլերի միջև), այնպես էլ գրաբարի և միջին հայերէնի կամ գրաբարի և ժամանակակից հայերէնի միջև:

**Բանալի բառեր** - բառակրկնություն, արմատական տիպ, հոդակապով բարդություն, անհոդակապ բարդություն, հնդեվրոպական արմատ, փոխառյալ արմատ

<sup>19</sup> Մենք հավանական ենք համարում կապը *փայլ* արմատի հետ՝ վերջնահնչյուն չ ձայնորդի անկումով՝ «հոգին պայծառացնել, տխրությունը ցրել՝ լուսավորել» իմաստներով:

**ЛАЛИК ХАЧАТРЯН – Корневой тип редупликации в армянских книгах Библии.** – Исследование лексики армянского перевода Библии показывает, что среди словообразовательных типов особое место занимает тип корневого повтора (редупликация). Корневая редупликация характеризуется следующими формообразующими факторами:

а) редупликативные слова с соединительным гласным (գէշագէշ, գոյնագոյն, գունդագունդ, դասադաս, դարձադարձ и т. д.),

б) редупликативные слова без соединительного гласного (աղխաղխել, աղտաղտին, այլայլել, արծարծել, խողխողել и т. д.).

Компоненты редупликативных слов представлены как исконно армянскими, так и индоевропейскими заимствованными морфемами. Эти корни играют активную словообразовательную роль в армянском языке.

Редупликативные слова широко употреблялись в переводе Библии. Их изучение может выявить словообразовательную особенность армянского языка в синхронном срезе. С другой стороны, в редупликативных словах возможны диалектные (дописменные) образования, вопрос которых исследует историческая лексикология.

**Ключевые слова:** *редупликация, корневой тип, слова с соединительным гласным, слова без соединительного гласного, индоевропейский корень, заимствованный корень*

**LALIK KHACHATRYAN – Root Type of Reduplication in the Armenian Books of the Bible.** – The analysis of the word stock of the translated books of the Bible shows that in the context of word-formation types, the root type of reduplication forms a unique group, which is characterized;

a) by connecting vowel element (գէշագէշ, գոյնագոյն, գունդագունդ, դասադաս, դարձադարձ, e. g.)

b) without connecting vowel element, (աղխաղխել, աղտաղտին, այլայլել, արծարծել, խողխողել, e. g.)

The root-type components of reduplication (root-stems) are either pure Armenian or Indo-European borrowed roots which have become productive word-formation morphemes at the level of Armenian word-formation. Formations of that kind have wide usage in the Armenian translated books of the Bible, the investigation of which reveals the word-formation opportunities of Old Armenian from the point of view of the synchronic stage of language investigation. On the other hand, among the compound words formed by root-reduplication, there can also be formations belonging to the pre-writing period which is subjected to revelation by historical lexicology.

**Key words:** *reduplication, root type, words by connecting vowel element, words without connecting vowel element, Indo-European root, borrowed root*

Ներկայացվել է՝ 14.01.2019, գրախոսվել է՝ 13.02.2019, ընդունվել է տպագրության՝ 21.02.2019